

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՄԷԿ ՑՈՒՑԱՆՄՈՅՑ՝ ՄԷԿ ՓԱՍՏԱՎԱԽԵՐԱԳԻՐՔ ԵՒ ... ՆՈՐԱՅԱՅՑ ԷՋԵՐ...

Հայոց Ցեղասպանութեան առաջին իսկ բացայայտ օրուայ վերաբերեալ գուժող ցուցանմոյշ է Հայաստանի պատմութեան պետական թանգարանում 1965 թուականից հանգրուանած ուլունքաշար համրիչը՝ ՆՊՖ-948 համարի ներքոյ, որին առնչուեցի 1984թ., թերեւս անհրաժեշտ պատահականութեամբ¹, մինչդեռ 1990-ականներից արդէն այն ինձ վերջնականապէս ուղղորդեց մանրակրկիտ ուսումնասիրութեան, նոր ծանօթացայ Գրիգորիս ծայրագոյն վարդապետ Պալաքնանի՝ համրիչի 99-րդ հատին փորագրուած ազգանուանակրի «Հայ Գողգոթան» յուշավաւերագրութիւն²: 1995 թուականից ի վեր ցուցանմոյշն իր գաղտնախորհուրդ բովանդակութեամբ հանրութեանը ներկայացրինք ու ներկայացնում ենք յօդուածներով³, զեկուցումներով եւ ռադիոհար-

¹ ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ, «Ե՛ւ «Գարուն», ե՛ւ «Յառաջ», «Գարուն», *ամսագիր*, 05.2003թ., էջ 57-59:

² ՊԱԼԱՔԵԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ Ծ. ՎԱՐԴ., «Հայ Գողգոթան», I հրտ., Ա. հատոր, Վիեննա, Մխիթարեան տպարան, Նոյնը, II հրտ., «Հայաստան», Երեւան, 1991թ.:

³ ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ, «Անգուզական ցուցանմոյշ, կամ վերագտնուած Մասունք», «Գարուն» *ամսագիր*, 08.1995թ., էջ 72-75: Նոյնը, «Ցուցանմոյշ, որ ողջ մի ժողովրդի ֆակտագիր է արտայայտում. յայտ համայն սփիւռփին», «Ազգ» *օրաթերթ*, 1995թ., 28.12: էջ 6: Նոյնը, «Եղեռնապարծ Մասունք. վաւերագիր վկայութիւն», «Հայոց Ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցեր», 2002թ., թիւ 6, էջ 72-86: Նոյնը, «Թանգարանը պատմագրութեան հիմնակունք. որոնում են... վերապրողաց եւ նահատակաց յետնորդները», «Մշակոյթի զարգացման եւ մշակութային քաղաքականութեան հետազոտութիւնների կենտրոն», «Մշակութային լրատու», NN3-4, 5 սեպտ., 2003թ., թիւ 34 հաղորդագրութիւն: Նոյնը «Թանգարանային ցուցանմոյշն անխօս՝ ամենախօս վկայ. պրպտումը շարունակում է՝ արձագանքների թելաշրջանում...» Մեծ եղեռն 90, Հանրապե-

ցագրոյցներէ միջոցով (երբեմն՝ հեռուտատեսուիթեամբ), շուրջ տասնամեայ ժամանակահատուածում բացելով պատմութեան կծիկը՝ էջ առ էջ՝ անընդմէջ պրպտումներէ, սուղ, բայց էականօրէն նշանակալի արձագանքներէ⁴, նաեւ նամակագրութեան շնորհիւ: 2002 թուականին մէկ ցուցանմոյշն ամբողջացրեց մէկ փաստաւաւերագիրք-պատմութիւն, «Եղեռնայու Մասունք կամ Խոստովանողք եւ վկայք խաչի» հոգեբուխ վերտառութեամբ⁵, նուիրուած Հայաստանում Գրիստոնէութեան, որպէս պետական կրօն հռչակման 1700 ամեակին, քանզի համրիչ-Մասունքին արձանագրուած հայ ընտրանի աքսորականների եղբրական վախճանը՝ նահատակ ու վերապրող անուանադարձութեամբ, իրաւամբ, արգիւնք էր գայլաբարոյ թուրք պետական մեքենայի մանրամասնօրէն ծրագրած Յեղասպանութեան, որի իրականացման գործիք էր նաեւ «անհաւատները» դէմ «սրբազան» յորջորջուող պատերազմի հրահրուած, ամենաթողութեան պայմաններում զազանն իր մէջ սանձագերծ՝ խառնամբոյ թուրք ժողովուրդը: Ասուածն անվերապահ իսկութիւն է, առանց դոյցն իսկ չափազանցութեան, եւ այդ եւն վկայում արհաւիրքին իւրաքանչիւրն իր անհատական խաչը կրած վերապրողների սահմուկեցուցիչ յուշագիր-իրապատում պաթեկերաշարերը...

տական գիտական նստաշրջանի նիւթեր, «Դպիր» հրտ., Գիւմրի - 2005թ., էջ 125-133: Նոյնը, «Музейный экспонат - немой-говорящий свидетель», «Азг», еженедельник, 7 (8), 8 ноября, 2005г. Հրատարակութեան ընթացքի մէջ է «Թանգարանային ցուցանմոյշը՝ պատմութեան նորաբաց էջ» յօդուած-հաղորդագրութիւնը:

4 ՄԻՍԱՔ ԶԵՒԱՀԻՐՃԵԱՆ, նամակ իմբաքրութեանը, «Մեծարգոյ խմբաւոր», «Գարուն», 1995թ., թիւ 11-12, էջ 36: ԲԻԻՐԱԿՆ ԶԵՐԱԶ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ, «Համրիչի 30-րդ հատը՝ Գասպար Զերազ», «Ազգ», 1996թ., օգոստոսի 21, էջ 6: Ծնորհակալութիւն նամակագիրներին. - մեծարգոյ տիկին Արփի Թոթոյեանին, պարոնաք Կարապետ Հաննէսեանին, Արա Կարմիրեանին:

5 ԿԱՐԻՆԷ ԱԻԱԳԵԱՆ, «Եղեռնայու Մասունք կամ Խոստովանողք եւ վրկայք խաչի», «Չանգակ-97» - «Մուղնի», Երեւան, 2002թ.:

6 ^ա Յովհան Կարապետեան (համրիչի 2-րդ հատի անուանակիր. - ծնթ. Կ.Ա.) «էջ մը աքսորականի յիշատակներէս», տե՛ս՝ «Միսաք Մեծարեմնը եւ Դանիել Վարուժանը ժամանակակիցների յուշերում», կազմեց եւ ծանօթագրեց Ա. Շարուրեանը, «Սովետական գրող» հրտ., Երեւան 1986թ., էջ 267-271: ^բ Բիւզանդ Քէչեան (համրիչի 33-րդ հատի ազգանուանակիր. - ծնթ. Կ.Ա.) «Դրուագ ախորի շրջանէն», տե՛ս՝ Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», ԺՁ տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պօլիս, 1922թ. էջ 33-45: ^գ Արամ Անտո-

Արդ դարձեալ ու դարձեալ արձագանքների սպասումով ներկայացնենք 1915թ. Ապրիլի 11/24-ին ձերբակալուած եւ Չանդըրը աքսորուած հայ մտաւորականութեան եւ երեւելիների անուանացանկը (ազգային-կուսակցական գործիչներն ընթացիկ ճանապարհից աքսորուեցին Այաշ եւ հիմնականում նահատակութեան քուեցին), որ եղբրական իրողութեան յստակ գիտակցումով պատմութեանն է աւանդել 71¹-րդ հատի անուանակիր, Բերայի Ֆերիքէօյի «Մախթար» (Թաղապետ), աքսորական-նահատակ Վարդերես Աթանասեանը, որպէս անմիջական վկայ (Մատուցը Թանգարանին է նուիրել վերջինիս Փարիզից հայրենադարձուած դուստրը՝ Էթենի Աթանասեան-Գիւլբոլեանը, ամուսնու՝ Ստեփան Գիւլբոլեանի հետ այցելութեամբ՝ 1965թ.):

Համրիչի առաջին անհամաչափ հատին փորագրուած է

Չանդըրի 1915թ.

Ապրիլ 11

Յիշատակ

Յաջորդող 99 գլանաձեւ, համաչափ հատերին՝ աքսորականների ազգանուններն են, երբեմն՝ անունները, NN55-ին եւ 86-ին՝

նեան, «Այն սեւ օրերուն» - Պատկերներ (համրիչի 35-րդ հատի ազգանուանակիր - ծնթ. Կ. Ա.), Պէյրութ, 1985թ.: ¹ Միքայել Շամտանեան (համրիչի 41-րդ հատի ազգանուանակիր - ծնթ. Կ.Ա.), «Չանդըրըն վերյիշումներ», Թէոդիկ, «Յուշարձան Ապրիլ տասնըմեկի», ² Հրտ., Կ. Պօլիս, տպագր. Օ. Արզուման, 1919թ., էջ 113-121, նոյնը, «Յուշարձան նահատակ մտաւորականութեան», ³ տպգր. Կ. Պօլիս, «Նաւասարդ» հրատ. թիւ 4, վերատպ. ՀԿԿ կենտկոմի հրտ., Երեւան, 1990թ., էջ 131-139: ⁴ նոյնը, «Հայ մտքին հարկը եղևոնին. Բնութագրի մտածումներ եւ զգացողութիւններ», Ազգային քաղաքական մատենաշար, տպագր. Օ. Արզուման, Կ. Պօլիս 1919թ.: ⁵ Օհաննէս Թէրլէմէզեան (համրիչի 87-րդ հատի ազգանուանակիր - ծնթ. Կ. Ա.), «Պոլիս. մտաւորականներու ձերբալակութիւնը եւ Բնութագր», տե՛ս՝ «1915. - Աղէտ եւ վերածնունդ», Աղէտէն վերապրողներ, Փարիզ, տպագր. «Արաբ» 1952թ., էջ 231-242: ⁶ Գրիգորի Մ. վարդ. Պալաեան (համրիչի 99-րդ հատի ազգանուանակիր - ծնթ. Կ. Ա.), նշ. աշխ. էջ 138-139 (I հրտ), 133-134 (II հրտ.), 225-226, 211-213 (համապատասխանաբար): ⁷ Փիթեր ԲԱԼԱՔԵԱՆ, «Ճակատագրի սեւ շունը», յուշագրութիւն, «Տիգրան Մեծ» հրտ., Երեւան, 2002, էջ. 180, 194-195, 199-200, 202-204, 253-258, 282-284:

* Համարակալումը՝ 1-99 կատարուած է անուանակիրներին վկայակոչելու համար: Աստ եւ յետայսու անուն-ազգանուանակրաց յիշատակումը՝ ժամանակի համապատասխան ուղղագրութեամբ:

Լեւոն - 2 , Օհնիկեանք - 4 թուերով, որ պարզբանուած է. -
 Լեւոն անունով երկու անձ, Օհնիկեան ընտանիքից՝ 4-ը. - հայրը՝
 երեք որդիներով⁷ :

Ահաւաստիկ ամբողջական ցանկը.

1	Կոմիտաս վ.	34	Թօփեան	67	Պասմանեան
2	Յովիան վ.	35	Անտոնեան	68	Մելիքեան
3	Քաջունի Քիւնյ	36	Թօյայեան	69	Զպեր Բարտարապետ
4	Ճէվահիրքի	37	Շահնուր	70	Արպանեան
5	Ռ.Սեւակ	38	Ս. Սրենց ուսուցիչ	71	Վարդիբեւ մուխթար
6	Միսիսեան	39	Խօնասարեան	72	Ֆերուխան
7	Թօփեան	40	Վարուժան	73	Սարաֆեան
8	Վարդան Քիւնյ	41	Շամտանեան	74	Ալթունեան
9	Գ.Ճէլայ	42	Զատուշեան	75	Ճամպագ
10	Գազագեան	43	Թապագեան	76	Հրայ
11	Թորգոմեան քժիշկ	44	Տիրունի	77	Մոմեան
12	Պօղոսեան	45	Ադայապեան	78	Գալէնտեր
13	Տիմոնեան	46	Բարսեղեան	79	Վաղիմակ
14	Միրզա	47	Տօրեան	80	Գալֆայեան պաշտօնեայ
15	Ալթունեան ատամնարոյժ	48	Եսայեան տաղարար	81	Պէլլերեան
16	Կիւլիստան	49	Գոչո Արթին	82	Պարոյր
17	Զարեհ	50	Երջանիկ	83	Նոյիկ լանճնակատար
18	Եզնիկ	51	Զեմոր	84	Թաթարեան
19	Ասատուր վ. դեղագործ	52	Խաչիկ	85	Քէօլեան
20	Մանիկեան	53	Հրանդ	86	Օհնիկեան՝ - 4
21	Զարիֆեան	54	Երեսում	87	Թերլեմէզ սեղանաւոր
22	Միսիսեան	55	Լեւոն-2	88	Տէր-Գեորգեան
23	Հանեան	56	Ագրիկ	89	Պասմանեան
24	Ղազարոս	57	Գանթարեան	90	Գայրգեան
25	Թէրգեան	58	Կոզմոս	91	Իննիկեան
26	Նշան	59	Պէլլերեան	92	Գարակէօգեան
27	Նարկիլեանեան	60	Թաշեան	93	Մանեսսեան
28	Արսէնեան	61	Հանէսեան	94	Ղոնչէկիլ
29	Դանիէլեան Պ. փաստաբան	62	Արամ	95	Փարիսեան
30	Զերագ	63	Մելիք	96	Յ. Գորեան վեոկն
31	Մովսէս	64	Տէօվլէրեան	97	Քերոբեան պատուելի
32	Տ. Քէլէկ խմբագիր	65	Քէհեանեան արհեստաւոր	98	Թումանեան
33	Բ. Քէչեան	66	Մաղազանեան	99	Պալագեան ծ.վ.

⁷ ԳՐԻԳՈՐԻՍ Ծ. ՎԱՐԴ ՊԱԼԱՔԵԱՆ, Նշ. աշխ. (I եւ II հրտ), էջ. 99, 98:

Ինչպէս ենթադրուում էր, 2002-ի դրութեամբ ամբողջ ու աւարտուն գիրքը՝ շարունակական էր իր բնոյթով, քանզի հրատարակումից յետոյ վերապրողների յետնորդներից ստացած նոր արձագանքների⁸, նորանոր պրպտումների արդիւնքով 2005-ին հանդէս եկանք զեկուցումներով՝ Հայոց Յեղասպանութեան 90 ամեակին նուիրուած Գիւմրու Մ. Նալբանդեանի անուան մանկավարժական ինստիտուտի կազմակերպած գիտաժողովին, եւ Երեւանի Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի թանգարանագէտների եւ գրադարանագէտների նախաձեռնած գիտաժողովին, որը նուիրուած էր հայոց գրերի գիւտի 1600 ամեակին:

Առաջին զեկուցման հիմնանիւթը հրատարակուեց գիտաժողովի յօդուածաշար-ժողովածուի էջերում «Թանգարանային ցուցանմոյն անխօս՝ ամենախօս վկայ. պրպտումը շարունակուում է՝ արձագանքների թելադրանքով...» վերտառութեամբ, երկրորդը՝ «Թանգարանային ցուցանմոյնը՝ պատմութեան նորաբաց էջ» վերնագրով, որպէս յօդուած-հաղորդագրութիւն¹⁰, յանձնուած է տպագրութեան՝ առանց առկայ նորայայտ նկարաչարի, զուտ տեխնիկական պատճառներով, եւ ներկայացնում ենք այն՝ սոյն հանդէսին (տե՛ս՝ նորայայտ նկարաչար I):

Յետագայ պրպտումներին ընթացքում Կանադայից ինձ հասաւ Մեծարգոյ պարոն Արա Կարմիրեանի այնքան սպասուած նա-

⁸ ՄԻՍԱՔ ՃԵՒԱՀԻՐՃԵԱՆ, «Ոչինչ չի մոռացուել», «Հայոց աշխարհ», 8 մարտ, 2003թ., էջ 10: Նոյնը, «ՄԷԿ քանգարանային ցուցանմոյն՝ մէկ վաւերագիր...», «Բնօրրան», Հայաստանի հայրենակցական միութիւնների հանդէս, 2001-2003, թիւ 1-2-3 (14-16) էջ 292-293: ԼԻԱ ԲԱԼԱԳԵԱՆ, «Ուշագրաւ վաւերագիրք», «Երկիր» շաբաթաթերթ, 2003թ., փետրուար 14-20, էջ 12: Շնորհակալութիւն նամակագիրներին՝ Մեծարգոյ Տիկ Սիւզան Ալթունեան-Հալէբիին (համրիչի թիւ 15 հատի ազգանունակիր՝ վահան Ալթունեանի դուստրը - ծնթ. Կ.Ա.), պարոնաթ Արա Կարմիրեանին, Միհրան Մինասեանին, Հայկ Թաշճեանին (համրիչի թիւ 60 հատի ազգանունակիր որդին - ծնթ. Կ.Ա.):

⁹ ԿԱՐԻՆԷ ԱՒԱԳԵԱՆ, «Թանգարանային ցուցանմոյն անխօս՝ ամենախօս վկայ. պրպտումը շարունակուում է՝ արձագանքների թելադրանքով...» Մեծ եղեռն 90, Հանրապետական գիտական նստաշրջանի ճիւղեր, Գիւմրու պետական մանկավարժական ինստիտուտ, «Դպիր» հրատ., Գիւմրի 2005թ., էջ 125-133:

¹⁰ Յիշատակուած յօդուած-հաղորդագրութիւնը տպագրութեան ընթացքի մէջ է:

մակը, համրիչի 15-րդ եւ 60-րդ հատերին արձանագրուած աքսորական-վերապրողների վերաբերեալ մանրամասներով, յետնորդների հակիրճ նամակներով, ձեռագիր տեղեկատուութեամբ եւ լուսանկարներով (տե՛ս՝ նորայայտ նկարաշար II), որոնք եւս ներկայացնում ենք՝ պարոն Ա. Կարմիրեանի նամակին զուգընթաց, կրճատումներով չաղաւաղելու նկատաւմամբ՝ անմիջամուխ, ընթերցողին, եւ ո՛չ միայն, անվերապահօրէն՝ պատկան մարմիններին, համայն աշխարհի պետական ատեաններին թողնելով համապատասխան եզրայանգումները:

Ձեռագրի լուսապատկերները՝ յաջորդ էջից.

Ճանճրեալ, 17 Մեպր. 2005

Արևիկի Արիկեի Կարիկեի Կոմիտեան

Քաղ զժողով պարտախնդիրն ճշ բնույթից ռուսաց, բայց ի ճշման զլուր հանելց։
 Գերեալ չիբր ճէ, զսել իճայն ինկուպուզիպիական արեալիքի անպարզաճ է 90 արտի
 ապա ընր այցը հարուանոց աղիքի ճշ յնքին ճանրանանաթիւններն ճար ճարելոցն
 պաշտաստիկն բերելու համար իր գարիներն ճարող բանասիրակիի ճշ ինքրանքին դէճ
 արրիկայ։ Բայց իր սրանքան ճերին բնոյթին բերանք պիտք է Կեղեմալ պաւել ինչ այդ
 ճարարութեան ճնունդ ցրուց պարճառն ճարին։ Ասիկն ճի քանի ճեսարարի և ճանալի
 ճարուն հարց ճէ։ Գժուար. ինուն ճշ ինչանայ ճարի ճարչեան ճշ և Միւսան ճարիքի
 ճշ ճարեալու, ցարիկեթոլ ճանայ ճանայան անչեայ ճշ ճարեալ ճանայ ճարեալու ճիբ։
 Արշաւալ անչայ ճայ ճարչարանական ճանաններն և ճիբ բարեխնդիրն ճարան ճա-
 նելու ուղղութեանք երևուպից ճարեալ ճիբ, "Յարա" ճարիան ճարեալն ճարարա-
 ներն ճարար ճարեալն Կարճառան ճանանպարտեան ճանարարեալն ճարարարիկն
 է ինչոց անարիկ։

Արիկե Արիկան ճարիկի արողական ճիմանք սա ճրանի ճեսա և ճարեալից
 ճարիկ։ Գար համարի է ուրեմ ճի ինչի ճարեալ ճայ ճարեալի ճիբ այն ճիբ
 ճանարարիկներն ցար ճիպա քալ։ Ես ճի ճրո ճեսա ճշ և այ ճեսարարան։

Չեյի պիտ ճրեմ արանանքոյ ճիման Արիկեաներ և երեք ճանաններն ճար-
 ներ։ Ասոց ճիբարարներն և ճարարից բնանաններն ճարին արեղեմ-իկներ
 ճրոց ճարից ճեսարիկ և Արիկե Արիկան ճարիկի։ Մարչ անհար ճի բա-է արե-
 նելու համարից ճարաններն այ ճեսա եւ 1915 ճի պարիքն ճարեալ ճարիկ երբ։

Գրանարիկն ճի ճարեալական է ճիման ճարիկին ճիբ ճար-իկն, որ անչեալ
 ճարաններն ճրոց պահան ճայ և անբոց ճիարի ճի ճիպարի, ինչպա ճարար-իկն
 ճարեալան ճարան համար ճարիկն։ Գրանարիկ ճարիկն անքն սոճար-իկն ճար-
 նան արեալական և ճարի բանարարի ճարիկն ճարիկ ճի ճիպ։

Արիկե Արիկան ճարիկն ճարիկ ճարիկ ճարիկ որ ճիման ճարիկն ճիբ է ճարիկն, բայց
 ճիման երև ճարիկ այ անարան եւ ճիմանարիկ ճանարարան. ճիբ ճարիկն,
 երան և ճար ճարեալներն ճիբ ճար արան ճիման ճարեալներն ճանարիկն բիբ
 և ճարիկն բարեխնդիրի ճիբ է ճարարարի արեալի ճիբ։ Ունեպան է ճարիկն ճի և
 ճարար ճի, որանքի 5 ճարիկ։

երկրորդ ցաւոյ ևրան . Իր հարգին անուանացն ի և ունեցան է երկու ճան ցաւ-
 անք : Իր ճոր օրնաւոյ զարգան էր արամեարոյժ , սակցն իր շխաւոյ ցարտնուէր
 եղան ի վաճառական-իքն ընկողնքն անուանացն եւ մեք ունի աղէ՛լ ցաւք ը :

Հարկան և ևրան , որ ևք հայրի ընթ քաւի քարիքի քարերո-նն ունիէ : Իրեկ
 ուսանողան քարիներն քարան եւ համարաւար-հոսանքի ճարտոնդ-իտէ : Կար
 ը հայ զարգաւարից ընթերնոյ ենթարկան եւ Թարք Համարաւար (զարգնի և
 արգիւն) հոսանք-իտն աչքեղ-իտն : Բնդարհամարտ քարիներն աչք-
 իարհոնան դարձան ին ուրիւնական և զարգան զար-իտն հեղաւարտ ը
 արտն ունեցաւ : Միև ևնթանն երբայրն աչքեղ և ընթերնի ունեք աչքեղ
 արտնի հարհի , սակցն ըր հայրի եղան ճան իրբարտեղով . բաճար, ին ունի :

Սի ին Արցան , իրեկ ընթանիքն աչք-օրտն աչքն վար սա բաւերոյ ի պարի :
 « Կարտանայար որ երբայրն արտնան եղան ին ոչ հար ճոր գրարիներն , այլ
 բաճարի գրարն աչք : Տ-Ց քարիան էր աչք-ճանայ և իւրի պարտնան էր
 ունի-ճիւն ճիւն-այր ճարն » :

Արցանի փոք քարիքի ինարան է ճան ՍԵՒ սե օրտն իրարաւանք : Իր ճան-
 րանան ընթերնոյ և գր-անանքն ևնդ-անդեղ ճանցն իր իրարտնան ըն-
 ճարն երբար-իտն : Գարն որ ինան հայրի զար-արտնայի և ճարտնիքն զար
 արար ընթերն որտնան ըր , աչք-օր աչք քարիքի էր զարան և հարարան է իր
 էրն արարաւար ճանցն ըն և ճան բարան է իր արամեարոյժ զարտնարանք :
 Անդայրն ըն ճիւնան իր-անթին արարանք և ունեցան եւ ընթերն-իտն քանի
 ընան-արարտն-իտն : Գրարի Արցան ար զարգիքն արտնան ընթերնան
 ընթերն արարան է և աւարան է : Գար լա ի ճիւն ըն-ի-ճանքն ի-իտն
 « Կեանար իրարիքն ընթերն » (ճանար արամեարոյժն աչքիքն) արարտն-իտն :

Արցան իր հարգին անուանան : սակցրական Սր-հարար ճանցն ընթերն և ունի
 աչքի ըն և արցն ըն : Ինն երբայրն աչք-արտն-իտն եւ սակցն արցն-իտն որ իր ընթերն
 քարիքան է մեքայր և մեքայր , բարարտնան զանայ երեք քարերոյ :

Հարգանան քարեր . բարք երեկն է Կարարի Բարգանի արան , ճարք ինանանի
 արարանն ընթերնիքն եղան ի ու ի ընթերն-ն իրարանան աւարտնի համար :
 Գրարիքն որ Եճ ին ըն ընթերն-արարտն-իտն եւնան երբ , որպի նոյն քան բարիքն երբ
 արար անդի ցաւաներ : Գար սակցն ընթերն ևն ինան ընթերն-արարտն-իտն
 արարարտն եւ ընթերն : Սակցան է որ եւ իր ճորտն իր ճարտն-իտն ընթերն : Երբ

Համրիչի 60-րդ հատի ազգանուանակիր Կարապետ Թաշ-
ճեանի որդու՝ յարգարժան պրն. Հայկ Թաշճեանի նամակները՝ իր
իսկ ձեռագրով.

90 Յունիս 2005
Յ. Կ. Միշիպուհ

Հարգիլի Ամբ. Գ. Արամյան,

Եւ կարապետի թաշճեանի տղան,
հայր թաշճեան:

Չիլի Բեկարայի. Արայ կարապետի
ձեռագրի պատկեր:

Իրաւ Արայի 24.1915 իս արմատիկ
և իրի աշխատանքայն արայ արգարժան-
կարի միջոցայն ճանակ արիւ-
նակարայի կաւ քանոյ զանիկ:

Միայն ձորս իրարանայի պարեանիս կան:
Կանակ պարեան՝ արիւ պիտի Չիլի իրի
Արարարժան:

Կարապետիկ պարայի ճանակարի,
հայր թաշճեան ՍԾՏ.

Յաջորդը՝

20 Յունիս 2005

Արիւ Արայ,

Զայ՝ պիտի աշխատի այս ճանակ
պարեանից պիտի Արարարժան զիս
Չիլի Բեկարայի:

Զիլի Բեկարայի 24 Յունիս 05
Չիլի Բեկարայի իրի պիտի զիս Չիլի Բեկարայի
արարարժանի կանակ պարեանիս:

Արարարժան
հայր

Յամփոփումն, որոշ մտորումներ՝ նամակների տեղեկատու-
ութեան կապակցութեամբ:

Անդրադառնալով Վահան Ալթունեանի (քննարկուող համրի-
չի թիւ 15-ը) լուսանկարին, նամակագիրը սեւեռուն խորհում է.
«Լուսանկարին մէջ յատկանշական է Վահան Հայրիկին դէմքի
խստութիւնը, որ անցեալի դառնութեան դրոշմը պահած ըլլալ
եւ ամբողջ կեանքի մը ընթացքին, խնդալու կարողութիւնը կոր-
սընցուցած ըլլալու կասկածը կ'արթնցնէ»...

Ահա եւս մի վերապրողի կենսընթացքի արտայայտութիւն,
որ անմիջական գուգահեռի մղեց ինձ, յետաճաւիբքի երկրորդ
սերնդի մասին Անդրանիկ Ծառուկեանի «Մանկութիւն չունեցող
մարդիկ» յուշավաւերապատումից՝ տողացի. - «... Ես գիտեմ, թէ
բոլոր սրտերը կառչած են իրենց մանկութեան ու բոլոր աչքերը
գաղտնի արցունքով ու խանդաղատանքով կը նային ժամանակին
մէջ կորսուած մանուկի մը ետեւէն»:

Բայց գիտեմ նաեւ, թէ աշխարհի անկիւններուն մէջ մոռ-
ցուած բազմութիւն մը կայ, տասնեակ մը հազար ինձի պէս տըր-
տում տղաք, որոնք ամէնէն դժբախտ մարդիկը եղան ու պիտի
մնան այդպէս, որովհետեւ մանկութիւն չունեցան: Գիտեմ, թէ ա-
նուն չունեցող բան մը եղաւ մեր մանկութիւնը, թշուառութեան
ու տառապանքի դժոխսային խառնուրդ մը, որուն յիշատակն իսկ,
տարիներ ետք, դեռ կը պահէ մեր սրտերը կարծր ու հոգիները
խանձուած:

Մանկութիւն չունեցանք, որովհետեւ հայ էինք ու որք
էինք¹¹»:

Յաւելներ եւս մի գուգահեռ-յիշատակութիւն, արդ՝ համրի-
չի 99-րդ հատիկի ազգանուանակրի յետնորդներից¹² Փիթեր Բա-
լաքեանի «Ճակատագրի սեւ շունը» յուշագրութիւնից, որն ար-
տայայտում է Յեղասպանութիւն ապրած հայութեան՝ մայրենին
կորցրած երրորդ սերնդի ներկայացուցչի հոգեցունց ապրում-

11 ԱՆԳՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ, «Մանկութիւն չունեցող մարդիկ», գլուխ 1
«Եթէ տրուէր», Հայպետհրատ., Երեւան 1963թ., էջ 3-4, նոյնը, «Մանկու-
թիւն չունեցող մարդիկ», «Նրազային Հայէպը», գլուխ I - «Նթէ տրուէր»,
Սովետական գրող հրատ., Երեւան 1985, էջ 8-9:

12 ՓԻԹԵՐ ԲԱՒԱՔԵԱՆ, «Ճակատագրի սեւ շունը», յուշագրութիւն, «Տիգ-
րան Մեծ» հրատ., Երեւան 2002, էջ 1-2 (Տոհմածառ), մանրամասն՝ գլուխ
«Ընթերցելով կմախքը», էջ. էջ 298-309:

ները, մօրաքրոջը յղած հարցումով. «Այսքան ժամանակ ինչու՞ ոչ մէկը ոչինչ չի ասել այս ամէնի մասին, - ձայնս անվերահսկելիօրէն կատաղի էր,-չէ՞՞ որ սա ձեզ հետ է պատահել: Տատիկի հետ: Մեր ընտանիքի հետ»: Եւ հետեւում է պատասխանը. - «Կեանքում ամէն ինչ կարելի է հասկանալ, երբ որ պատրաստ ես այդ ամէնն հասկանալու: Հնարաւոր է՝ այս ամէնն իմանալը խանգարեր քեզ»¹³:

Այնուհանդերձ՝ յաղթանակում է արեան ընդվզումը... յանուն Արդարութեան վերականգնման...

Պարոն Ա. Կարմիրեանի նամակի էջերից բացայայտեց եւս մի իրողութիւն՝ պատմական իսկութիւն: Համրիչի թիւ 82-ին փորագրուած է՝ Պարոյը: Ենթադրել էինք՝ Արզումանեան¹⁴, նրկատի ունենալով Թէոդիկի տեղեկատուութիւնը, որ է. «Պարոյր Արզումանեան. - ծն. Անջրդէ գիւղը (Արաբկիր) 1878-ին եւ նախն. կրթութիւնը ստացած Եզնիկեան ուսումնարանը (Երզնկա). - 2 Յունիս 1915-ին կախաղան բարձրացող 20 Հնչակեաններէն Մկրտիչ Երէցեանի ատենօք զէնք դրկած ըլլալը պատճառ կ'ըլլայ որ քանիցս Պարզմ. Ատեանի առջեւ հարցաքննուի եւ հուսկ ուրեմն աքսորուի»¹⁵:

Ընթերցողին յանձնուած նամակի տեղեկատուութեան համաձայն՝ յիշատակուած նահատակի նոյնանուն-ազգանուանակիցը՝ Չանդրըրից Պոլիս է վերադարձել՝ եղբօր ջանքերով: Հետեւաբար, այժմ կարելի է ենթադրել, որ համրիչի թիւ 82-ին արձանագրուած աքսորական Պարոյրը, Չանդրըր է աքսորուել թուրք ոստիկանական մարմինների բազմիցս հաստատուած «աշխատառճի» արդիւնքում, եւ նահատակը, ազգ. կուսակցական գործիչ, թերեւ Այաչի աքսորական է եղել, այնպէս, ինչպէս նահատակ Կարապետ Թաչճեանը¹⁶, որի նոյնանուն - ազգանուանակիցն է Չանդրըրի աքսորական-վերապրողը՝ քննարկուող համրիչի 60-րդ հատի ազգանուանակիրը:

¹³ Ն.տ. էջ 246:

¹⁴ ԿԱՐԻՆԷ Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, «Եղեռնայուշ Մասունք կամ Խոստովանողք եւ Վկայք Խաչի», «Զանգակ-97» - «Մուղնի», Եր. 2002, էջ 51:

¹⁵ Թէոդիկ, «Յուշարձան Ապրիլ Տասնըմէկի», I հրտ. 4. Պոլիս, տպագր. Օ. Արզուման, 1919թ., էջ 46, «Յուշարձան նահատակ մտաւորականութեան», Բ տպագր., 4. Պոլիս, «Նաւասարդ» հրտ., թիւ 4, վերատպ. ՀԿԿ. Կենտկոմի հրտ., Երեւան 1990թ. էջ 64:

¹⁶ ԳՐԻԳՈՐԻՍ Մ. ՎԱՐԻ ՔԱՆԱՔԵԱՆ, նշ. յուշագր. էջ, էջ 90 (I - II հրտ.)

Իրաւամբ, ճշգրտապատում զօրաւոր հիմնադրելներ են անմիջական վերապրողների յուշագրութիւնները, որին ի հաւաստում ներկայացնենք եւս մի տեղեկատուութիւն՝ համրիչի թիւ 15-ի՝ դեղագործ Վահան Ալթունեանի առնչութեամբ: Երուանդ Օտեանի «Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ)» ծաւալուն յուշագրութեան՝ աքսորի ի՛ր ընթացիկ պատմութեան մէջ արձանագրուած է. «Իրիկունը հասանք Գավաքը ուր ես պիտի գիշերէի իմ ընկերներովս: ... Գիշերը աղտոտ խանի մը փայտերուն վրայ անցուցինք:

Առտուն, արշալոյսին պատրաստուեցանք ճամբայ ելլելու: Նոյն միջոցին Թարսուսի կողմէն եկած կառք մը կանգ առաւ խանին առջեւ:

Տեսանք որ ճամբորդներ կային մէջը: Հետաքրքիր մօտեցանք եւ տեսանք որ Հայեր էին: Մին Յակոբ Գորեանն էր (տե՛ս՝ համրիչի 96-րդ հատը¹⁷ - ծնթ. Կ.Ա.), միւսը Յովհաննէս Թէրլէմէզեան¹⁸ (տե՛ս՝ համրիչի 87-րդ հատը¹⁹ - ծնթ. Կ.Ա.) եւ երրորդը՝ դեղագործ մը որուն անունը չեմ յիշեր: Այս վերջինը հիւանդ պառկած էր կառքին մէջ:

Չանկըրիէն՝ ուր աքսորուած էին Ապրիլ 11-ին՝ դրկուած էին մինչեւ Թարսուս, սակայն հոն վերադարձի հրաման եկած էր Պոլսէն»²⁰:

Համեմատենք այժմ համրիչի թիւ 15-ի ազգանունակրի դստեր՝ վեհանձն Տիկին Մարի Սիւզան Ալթունեան-Հալէբլիի «Մոնթրէալ, 2003» թուակիր նամակի համապատասխան հատուածը. - «Յարգարժան եւ սիրելի Տիկ. Աւագեան...

Ձեր գիրքին էջ 43 թիւ 15 - Վահան Ալթունեանը 6 օգոստոսին Չանղըրէն ճամբայ ելած է Պոլիս երթալու համար, սակայն սխալութիւն մը պատճառ եղած է; որ քրուի մինչեւ Տարսոն: Տողերու վերջ տալ կ'ուզեմ միայն սա աւելցնելով. երբ կառախումբը Հայտար փաշա կը հասնի զինքը դիմաւորելու

17 ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ, նշ. աշխ. էջ. էջ 7, 52:
18 «1915. Աղէտ եւ վերածնունդ», Աղէտէն վերապրողներ, ՕՀԱՆՆԻՍ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ, «Պոլիս, մտաւորականներու ձերբակալութիւնը եւ աքսորը», Փարիզ, տպ. Արաքս, 1952թ., էջ 239, 241-242:
19 ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ, ն.տ. էջ. էջ 7, 51, ծնթ. 157, էջ 98:
20 ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ, «Անիծեալ տարիներ. 1914-1919, (անձնական յիշատակներ)», Երեւան, «Նաիրի» հրատ., 2004, էջ 172-173:

գացող մայր, քոյր, նշանած (մայրս) հիւանդութեան պատճառաւ կերպարանափոխ եղած հայրս չեն ճանչնար»²¹:

Ահաւասիկ՝ յուշագրութեան՝ որպէս հիմնականը-պատմութեան անառարկելի փաստարկ:

Պրպտուծա շարունակում եմ այսօր էլ, յուսալով նաեւ նոր արձագանքներ՝ ի շահ ճշգրիտ ու ազնիւ պատմագրութեան:

ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ

²¹ ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ, «Թանգարանը պատմագրութեան հիմնակունք. որոն-
ւում եմ... վերապրողաց եւ նահատակաց յետնորդները», «Մշակոյթի գար-
գացման եւ մշակութային քաղաքականութեան հետազօտութիւնների կենտ-
րոն», մշակութային լրատու, NN 3-4, 5 սեպտեմբեր, 2003թ., թիւ 34 հա-
ղորդագրութիւն: ԿԱՐԻՆԷ Ա.ԻԱԳԵԱՆ, «Թանգարանային ցուցամոյճն
անխօս՝ ամենախօս վկայ. պրպտումը շարունակում է՝ արձագանքների
թւկադրանքով...», Մեծ Եղեռն 90, հանրապետական գիտական նստաշրջանի
հիւթեր, «Դպիր» հրտ., Գիւմրի, 2005թ., էջ 130:

Համրիչի 15-րդ հատի ազգանունակիր վահան Ալթունեանի դստեր՝ վեհանճն տիկին Մարի Սիւզան Ալթունեան-Հալբրիի պատմութեանը յանձնած տեղեկատուութիւնը՝ իր իսկ ձեռագրով.

1. Չերամբուաբոյժ ռեւիւան Կոթո-Չիւան

(1888 - 1964) Եւան և Յակոբյան Արոյի

2. Անձկանց ձի-անձր-թիւն և մասնագիտ Յրեհանէն Զորեան Կոթո-Չիւան

(1917 - 1995) Եւան Արոյի Յակոբյան Երեմիայի - Գամալա

3. Չերամբուաբոյժ Գրիգոր Կիրա Կոթո-Չիւան

(1918 - 1999) Եւան և Յակոբյան Արոյի

4. Մարի Չի-լան Կոթո-Չիւան Կոթո-Չիւան

1927 Եւան Արոյի Կոթո-Չիւան Երեմիայի - Գամալա

ՆՈՐԱՅԱՅՑ ՆԿԱՐԱՇԱՐ - I




Մարգիս Ճեվահիրեան
(համրիչի 4-րդ հատի
ազգանունակիր որդին)



Յակոբ Նարկիլեան
(համրիչի 27-րդ հատի
ազգանունակիր-վերապրող)



Սարգիս Ճեվահիրենանը՝ ընտանեոք



Էթենի Աբամասեան-Գիւրիլեանի աշխատանքային փաստաթուղթը՝ լուսանկարով (համրիչի 71-րդ հատի անուանակրի դուստրը, համրիչի նուիրատուն)

ՆՈՐԱՅԱՅՏ ՆԿԱՐԱՇԱՐ II

Ձանդըրըի ախորական-վերապրող, համրիչի 15-րդ հատի ազգանուանակիր Վահան Ալթունեանը եւ իր զաւակները.



Վահան Ալթունեան
(համրիչի 15-րդ հատի
ազգանուանակիր-վերապրող)



Յովհաննէս Նուրհան Ալթունեան
(համրիչի 15-րդ հատի
ազգանուանակրի անդրանիկ որդիւն)



Գրիգոր Արա Ալթունեան
(համրիչի 15-րդ հատի
ազգանուանակրի որդիւն)



Մարի Սիւգան Ալթունեան Հալէրլի
(համրիչի 15-րդ հատի
ազգանուանակրի դուստրը)

ՆՈՐԱՅԱՅՏ ՆԿԱՐԱՇԱՐ III

Չանդրըրըի աֆտրական-վերապրող, համրիչի 60-րդ հատի ազգանուանակիր Կարապետ Թաշնեանը եւ իր գաւակները.



Կարապետ Թաշնեանը՝
Հայկ որդու հետ
(համրիչի 60-րդ հատի
ազգանուանակիր-վերապրող)



Վերապրող Կարապետ Թաշնեանը՝
1936-ին



Կարապետ Թաշնեան
(համրիչի 60-րդ հատի
ազգանուանակիր-վերապրող)



Անահիտ եւ Տիրամ Թաշնեաններ
(Վերապրող Կարապետ Թաշնեանի
գաւակները)



Հայկ Թաշնեանն իր գերդաստանով
(վերապրողի կրտսեր որդին, կենտրոնում՝ նստած)



Հայկ Թաշնեանն՝ իր գերդաստանով
(վերապրողի կրտսեր որդին՝ կանգնած ձախից վերջինը)

One Museum Exhibit – One Document-Book... and Pages Newly Brought to Light...

KARINE AVAGIAN*

(summary)

The article introduces an exhibit-relic which found shelter at the State History Museum of Armenia in 1965. These are worry-beads on the 99 cylindrical and proportionate pieces of which are engraved the surnames or names of 103 Armenian exiles. On the 55th and 86th beads are engraved Levon-2, and Ohnikeans-4. It is found out that there were 2 exiles by name Levon, and 4 members of Ohnikean family – father and 3 sons. On the initial disproportionate bead is carved the following:

" Changhri 1915,
April 11,
Keepsake".

Then Varderes (Atanasian), whose name is on the 71st bead, passed to future a unique certificate about the arrests in Constantinople on the first undisguised day of the Armenian Genocide (April 11/24, old and new styles), about the exile of the Armenian intellectuals and celebrities to Changhri. As a result of a thorough study of the mysterious contents of the relic, in 2002 a document-book was accomplished: "Memory- Relic of Genocide or Those Who Suffered and Were Martyred for the Sake of the Cross". Then the continuous searches and new responses became the subject of two other articles:

1. "A museum exhibit – the speechless and the most speaking witness: the search is going on at the dictation of the responses..."

2. " A museum exhibit – a new page in History".

This third article contains the photos of the response- letters of Aray Karmirian, who was the immediate friend of the children of survived exiles of Changhri Vahan Aitounian (his name is on the 15th bead), and Karapet Tashtjian (his name is on the 60th bead). There are also three series of newly discovered photos.

The search is going on...

* Leading scientific worker at the State History Museum of Armenia